

ՀԱՅԴԱՍ

40 ՓԱՐԱ

ԱՅՆ ՏԱՐԱԾՈՎ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓԱՐԱ 40

ՏԱՐԱԾՈՎ ՇԱԲԱՋ ԵՎ ԱՅՆ ՏԱՐԱԾՈՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅՆ ՏԱՐԱԾՈՎ ԵՎ ԱՅՆ ՏԱՐԱԾՈՎ
100 ՊՐԵ ԱՐՁԱՐ ՎԵՐԱՄԱՏԵՎԱՅԻ 50. — ԳԱԼԱՐԱՎ ԽԱՄԱՐ 115 ՊՐԵ
ՎԵՐԱՄԱՏԵՎԱՅ 60. — ԾԱՑՈՒՅԹ ՏՈՂ 5 ՊՐԵ.

Ար եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել
Առ Արտօնատէր եւ Տնօրէն Անսօն Սահման,
Էսկի Զապրիյ ճատուեսի Նշան Էֆ. Պարտերեանի Տպարանն
Խմբագրութեան յանձնուած գրութիւն է և չեն տրուի:

Ժ Ի Ի 218 Գ . Տ Ա Ր Ի

1889

Մ 0.8 Ի 0 27 Շ Ա Բ Ա Թ


ԲՈՂԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Արուեստահանդէս. — 29րդ Տարեդարձ Ազգ
Սահ. — Դպրոցակ մն հանդէս մը. — Վա-
ճակ. — Ծրարէն նամակ մը. — Ակէ մնկէ. —
Հեք ուսանողը:

ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍ

Փարիզի Արուեստահանդէսը տես-
նելու և զուարճութիւնները մօտէն
վայելելու համար, աշխարհիս չորս
կողմէն ամեն ազգի ժողովուրդ այժմ
հասած խռնած են ի Փարիզ, այսպէս
որ Արուեստահանդէսը իւր հրաշալի
հաւաքածոյից հետ ի միասին, իլ
ներկայացնէ նաեւ ազգայնութեանց
ճշմարիտ հաւաքածոյ մը:

Եթէ մարդ երեւակայէ մի անգամ
այն հարիւր հազարաւոր անձերէ բազ-
կացեալ մարդկային ամբոխը, որ կը
բազկանայ ամերիկացի, անդղիացի,
գերմանացի, սպանիացի, չինացի,
ճաքոնցի, հնդիկ, զեդիկ, մօնկօլ,
վերջապէս աշխարհագրութեան մէջ
նշանակուած և ցայժմ գոյութիւն ու-
նեցող ամեն ազգի անհատներէ, իրենց
արդուզարդերովն ու տարազներովն
անշուշտ պիտի կարծէ թէ բարելոն-
եան խառնակութեան ճշմարիտ պատ-
կերն ալ կազմաւորուած է ի Փարիզ։
Երեւակայողը՝ կը կարծէ, բայց



ականատեսը ճշմարտութիւնը կը տես-
նէ։

Ընթերցող, թերեւս առարկես, թէ
այսչափ այլազան ժողովրդնց տես
սակ տեսակ և միմեանց անհամաձայն
բարուց, վարուց, ճաշակացն ու հա-
ճոյիցն համաձայն, տեսակ տեսակ ալ
զրուանքներ, հանդէսներ, նուագա-
ծութիւններ պատրաստած պէտք է
ըլլան Փարիզեցիք, որպէս զի իրենց
մեծափարթամ և մեծապատիւ հիւրե-
րը չը ձանձրանան և իրենց առա-
տաձեռնութէան գէշ համբաւ մը չը
թողուն։

Եատ ճշմարիտ է այս առարկու-
կութիւնը, բայց պէտք է գիտնալ թէ,
Փարիզցիք պատճեններ ու լուսաւու-
առակը խիստ լաւ սերտած և այս մա-
սին առաջնութեան համբաւը կը վա-
յելեն արդէն։

Օրինակի համար, այն Սամաթիա-
ցի ձկնորսը. որ Սամաթիայէն մինչեւ
ի Փարիլ տապանակ ուխտիով երթա-
լու համար ճամբայ ելած է, երբ ա-
միսներէ վերջ յոդնած դադրած, ու-
փերը ուռած Փարիզ համնի արդեօք
չը պիտի կրնայ յաջողիլ գտնելու Սա-
մաթիայի աննման համբաւը կրող քէւ-
ըւուն, որ իրեն համար ամենայն ինչ է,
և կամ եթէ քիչ մ'ալ զրուալ ուզէ,
չը պիտի կրնայ կանելլաջ-նու իւնին

զարնող խումբ մը և սպառ աճուն պոռ-
չտող երգիչ մը . անշուշտ այո՛ , եթէ
կամի և կամ լաւ եւս է ըսկէ՝ քսա-
կը ներէ , մինչդեռ իւր փափաքը ի-
րագործելու համար միայն հազարա-
ւոր մզոն ճամբաներ տապանակ ու իւ-
տիով երթալու յանձն առնող ձկնորսի
մը քսակը այլիշափ ներողտմիտ չի
կրնար ըլլալ . ուրիշ բան է , եթէ Փա-
րիզեցիք այս ձկնորսն ալ , իր տարօ-
րինակ ճամբորդութեանը պատճառաւ
հրաշալիւաց կարգը դամէն և փառա-
ւոր ընդունելութեամբ պատուեն զին-
քը . այն տաեն , բնականաբար քսակն
ալ կը պարարտանայ և իր ուզածն ալ
կը դժոնայ . ըստ մեզ՝ այսպէս ըլլա-
լուն ալ տարակոյս չկայ . . . ոպա-
սենք :

Հրագիրք սկսած են իւրաքանչիւր
օրուան մէջ Արուեստահանդէս այցե-
լողներու թիւը շարունակաբար նշանա-
կել , որոցմէ կը տեսնուի թէ ամէն օր
Արուեստահանդէս այցելողներու թիւ-
ը 200000ը կանյնի :

Այս թիւը կը սոսկացնէ զմեզ ,
մտածելով որ այսչափ մարդոց համար
ալ ուտելիք , խմելիք և ատոնք պատ-
րաստելու համար ալ մարդ պէտք է և
փոքրիկ դանդաղութիւն մը կամ ան-
հոգութիւն մը կրնայ հազարաւոր ան-
ձանց սովատանջ մեռնելուն պատճառ
ըլլալ . այո՛ , կը սոսկամք իրաւամբ ,
կարդալով երեխն որ այս ինչ օր Ար-
ուեստահանդիսի մէջ ամէն բան սպա-
ռեր և այցելուք անօթի ծարաւ ըըր-
ջակայ արուարձանները լեցուեր , և
հօն գտնուածներն ալ առեր , կերեր ,
լափեր և գարձեալ մեծագոյն մասը ա-
նօթի մնացեր է , մինչեւ որ Պուլան-
ժէի պէս մեծ մարդ մը օգնութեան
հասնելով , էտեւննեն լնել բարեհա-
ճեր որոյ շնորհիւ ամենքն ալ կշո-
ցեր են :

Եթէ ասոնք իրաւ բաներ են , շի-
տակը զիս ոսկիով ուռեցնեն ալ , այս
միջոցին Փարիզ չեմ երթար , վախնա-
լով թէ մի գուցէ հացի սպառաման մը
հանդիպելով , անօթի մեռնելու գա-
տապարտուիմ :

Ասկէ զատ , ուրիշ երկիւղ մ'ալ
կալ . որուն հոտը կամաց կամաց ել-
նել սկսաւ , այն է Այֆէլի աշտարակի
տատանումը :

Մենք անցեալները այս աշտարակին

վրայ գրած ատեննիս ըսինք թէ , Այ-
ֆէլի աշտարակը աւելի հաստատուն
իրերով հաստատուած և պաշարուած
լինելուն , Բաքելոնի աշտարակին նման
կործանելու վախը չը կրեր . բայց մեր
այս կարծեաց հակառակ այս շաբ-
թուան լրագիրը ծանուցին թէ Այֆէ-
լի աշտարակը կերերայ և այս պատ-
ճառաւ այն ինչ զօրութեամբ վերե-
լակներ հաստատելն անկարելի եղած
և այժմ հաստատուած վերելակնե-
րըն ալ անբաւական լինելուն , վար իյ-
նողներ և մինչեւ իսկ մեռնողներ ե-
զած են :

Տէր Աստուած , այն բանը որ կը
տատանի , թերեւս օր մ'ալ իյնայ .
հապա ելլայ հօն գտնուած տաե-
նըս իմ վրայ իյնայ . . . ահա այս մը-
տածումն ալ կը կեցնէ զիս Արուես-
տահանդէս այցելելէ :

Քանիցս առիթ ունեցանք խօսելու
Այֆէլի աշտարակին վրայ , այս ան-
գամ ալ աշտարակին ճշմարիտ պատ-
կերը ներկայեցինք յաչս մեր ընթեր-
ցողաց , որպէս զիս նորա բարձրութիւ-
նը ուշագրութեան առնելով մեր ըսած-
ներուն ճշմարտութեանը հաւատան :

29 ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԴԱՑԻՆ ԽԵՎԱՆԱԳԻՐԻ ԹԻԹԵԱՆ

Ազգային Սահմանադրութեան 29րդ
Տարեդարձի հանդէսն ըստ սովորու-
թեան պիտի կատարի վազը . (28 մա-
յիս) Ազգային Հիւանդանոցի դիմացի
պարտիզին մէջ , որ այս տարի նախըն-
թաց տարիներէ աւելի չքեզ և զուար-
ճալի երեւոյթ մը ստացած է :

Գեր. 8. Մաղաքիա եպիսկոպոս Օր
մանեան վաղն առաօտ ժամը 1ին
հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մա-
տուցանէ Ազգային Հիւանդանոցի մատ-
րան մէջ , և յետ աւարտման եկեղեց-
ւոյ , մեր Վեհ Սուլթան Համիտ Բ.
կայսեր , Օսմանեան Մեծագօր կայս-
րութեան , յուստիժ նախորարաց ,
ինչպէս նաեւ ազգային բարերարաց
բարօրութեան և թանկագին յիշաւա-
կին համար գոհարանական ազօթքներ
պիտի մատուցանէ :

Ճաշը պիտի սկսի ժամ ճիշդ ճին
Հիւանդանոցի դիմացի պարտիզին մէջ

Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագա-
հութեամբ և Պ. Թօնիի առաջնորդու-
թեամբ նուագածուաց ընտիր խումբ
մը ժամանակ ժամանակ պիտի նուա-
գէ , ըստ կարգագրութեան Մասնա-
խմբի :

Ճաշէն վերջ պիտի սկսի Հանդէսը,
կարգագիր Մասնախմբի կողմանէ ո-
րոշեալ կարգագրութեանց համաձայն ,

Աւելորդ է ըսել թէ այս հանդէսը
նախորդ տարիներէ աւելի չքեզ և
փառաւոր լինելու երեւոյթ մը կըն-
ծայէ , բայց ինդիր է դիմոնալ թէ ,
պէտք եղած ընդունելութիւնը և յու-
սացուած քաջալերութիւնը պիտի կըր-
նա՞յ վայելել . մինչդեռ նախորդ տա-
րիներէ աւելի քաջալերութեան և օ-
ժանդակութեան կոպասուի իրաւամբք .
— և ինչո՞ւ .

Որովհետեւ , Հիւանդանոցի վերա-
շնութիւնը՝ որ իրականութեան կար-
գըն անցած է այսօր ի չնորհս Հիւան-
դանոցի Հոգաբարձութեան անխոնջ և
յարաւեւ աշխատութեան , իւր ամ-
բողջ մասերով կատարելագործուելու
և կիսատ չը մնալու համար դեռ շա՞տ
կը կարօտի օժանդակութեան և քա-
ջալերութեան , և այս նուիրական
պարտաւորութիւնն ալ Հայ անունը
կրող ամեն անհատի կը վերաբերի ,
քանի որ , Հոգաբարձութեան Պատ-
անդամք , ըրած են՝ ինչ որ կրնային
ընել և այսօր չինութեան կարեւոր մաս
մը բարձրագործ կանգնած , իրեւ
պատկառելի նմոլ մը , համեստու-
թեամբ կը ներկայացնեն յաչս ժողո-
վութեան :

Այս ցաւալի անտարբերութիւնը ,
որ տիրութեամբ նշաբուեցաւ Համ-
բարձման տօնի օրը , չեմք յուսար որ
վազուան հանդիսին եւս նշաբելի լի-
նի , և անշուշտ Քաղ . և Կրօն . Ժողո-
վու անդամք , Երեսոփոխանք , պաշտօ-
նական մարմինք , Երեւելիք և մեծա-
տունք , հանրածանօթի գրագէտք և
ամեն բարեկեցիկ անձինք պիտի փու-
թան հաւաքուիլ Ամեն. Ս. Պատրիարք
Հօր շուրջը , ունենալով մէկ սիրտ , մէկ
ոզի և մի նպատակ , այն է նոր մզում
մը տալ վերաշնութեան գործիքն և
կատարելագէս ապահովել զայս :

Այս է մեզ համար օրուան ամե-
նակարեւոր ինդիրը , չինել մեր տու-
նը , մեր ապատարանը , մեր վերջին

յոյսը, նշոյլը, գթութեան տաճարը:
Ուրեմն թող ամեն Հայ փութայ և
աղիւս մ'ալ ինք զետեղէ, անշուշտ և
ապահով լինելով որ ժերեւս իրեն հա-
մար կը զետեղէ.

Բերայի Թաղ. խորհրդոյ կողմէ կը
ծանուցուի թէ, Ամեն. Օրբազան Պատո-
րիաք Հօր յատուկ յանձնարարու-
թեամբ՝ Գեր. Գարեգին եպիսկոպոս
Սրուանձտեանց թաղին Ա. Երրորդու-
թիւն եկեղեցւոյ տօնախմբութեան առ-
թիւ, ամսոյս 28 կիրակի առաւօտ Ա.
Պատարագ պիտի մատուցանէ:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ ՄԸ

... Մայր-Եկեղեցւոյ մեծ ժամա-
հարն, որ վաղեմի ժամկոչի մը նուերն
է կըսեն, եօթը հարուածներ թուցուց
օդին մէջ, ոյր սուր զօղանջը բանա-
տեղծական անուշներդաշնակութեամբ
մը եկաւ ականջիս տակ մարեցաւ.
Ճիշդ այս վայրկենիս, մինչ ես Մայր
վարժարանի յարակից պարտէզը կուզ-
զուեի Պարգեւաբաշխութեան ներկայ
գտնուելու համար, դաշնակի մը մե-
լամազիկ ձայնը լսեցի, որ անշուշտ
սիրատարփ կուսի մը նրբենի և ատան-
քուն տակ Մարտէեւը կը թրթուացնէր
մերթ կիթառի պէս հեշտ և ազդեցիկ
և մերթ քնարի պէս նուազ ու մելա-
մազիկ: Թէեւ սիրող մըն էի երաժըշ-
տութեան, որ խօսուն բանատեղծու-
թիւնն է ըստ Սիմոնիտի, սակայն չի
կրցի ամբողջապէս ունկնդրել այդ հեշ-
տանոյշնուագին, զի վայրկենի մը կո-
րուստը կրնար զրկել զիս այն շքեղ
հանդէսէն, ուրկէ շատ բան կը սպա-
սէի, յորմէ հետէ Տնորէն ընտրուեցաւ
Հայրէնի նախկին խմբագիրը:

Քայլերս փութացուցի, ընթացքս
արագացուցի և տասը վայրկեան յե-
տոյ պարտէզին մէջն էի: Քառակուսի
բացաստան մըն էր այն, բաւական ըն.
դարձակ դիրքով, ոյր պատերը մեծաւ
մասմար ծածկուած էին մեծագին ու
շքեղ գորդերով, զորս յատկապէս բե-
րել տուած էր առժամեայ Թաղ. Խոր-
հրդոյ գանձապետ Յակոր էֆ. Աճառ-
եան: Միջավայրին ճակատը կը փա-
ռազարդէր վեհ. Սուլթանի մեծագիր

պատկերն, ոյր ճիշդ հանդէպ, հովա-
նուտ ծառի մը ցից կոճղին վերեւ կախ-
ուած էր Պէղճեան Յարութիւն Ամի-
րայի պատկերն, Մտից գրան վրայ ևս
կը նշմարուէր քառակուսի տախտակ
մը, ԼՈՅ եկ Գիջնիթիին վերտա-
ռութեամբ, որ լս կը սփռէր հան-
գիսականաց արեւակէզ թիկանց վրայ
և էտունին երկուու ուսանողաց գըլ-
խուն վրայ.

Երկինք, ականակիտ առուակի մը
հանգուն ջինջ էր ու կապուտակ և Մա-
յիսի բոցավառ ալ եւս ալ ոսկեղէն
լուսոյ առատ հոսանք մը կը սփռէր
հանգիսավայրին չորս բոլորքը:

Միջավայրին երկու կողմը գրաւած
էր երկուու խուռանմբոխ բազմութիւն
մը, ընդ որս կը նշմարուէին մեր Ազ-
գային Զոջերէն ոմանք, ամենն ալ ոտ-
քի վրայ, ամենն ալ քրտնաթաթաւ
ճակատով և պոստած դէմքով, ի շը-
նորհս Մասնախմբի մեծապատիւ ան-
գամոց:

Հանդիսին սովորական նախագահն
էր Ամեն. Ա. Պատրիարք Հայրն, որ
իր գահուն վրայ բաղմած, կը նայեր
մտադիր. իր դիմաց վրայ տեսակ մը
հիացական ուշադրութիւն կը տես-
նուէր, որ նշանակն է ջերմ սիրոյ և
հայրական հոգածութեան: իր քովիկը
բազմած էին Գեր. Ալէաթճեան ու Սի-
մէոն սրբազնք և մէկ քանի եկեղե-
ցական Ա. հարք:

Միջավայրին երկու կողմերը դաշ-
նակներ գրուած էին, որոց միոյն քով
ալ բեմ մը, վարժարանի Տնորէնին ու
Մասնախմբին անդամոց համար: Բայց
Մասնախմումբ ըսինք և մոոցանք բա-
ցատրել նորա դերն ու պաշտօնը նոյն
օրուան հանդիսին մէջ: Քաւելու հա-
մար մեր մեղքը կը փութանք յայտ-
նել թէ Մասնախմումբ մը կազմուած էր
այն օր, հանդիսավայրը շքեղապէս
պճնազարդելու համար: պաշտօն մը
զոր յարդ տնտես ախպարներն ու ժամ-
կոյները կը կատարէին, համեմատա-
պէս աւելի լաւ և աւելի կանոնաւոր:

Երբ ուշադրիր ակնարկ մը ձգէիր ա-
նոնց վրայ, պիտի տեսնէիր իսկոյն դե-
ռափիթիթ տղաքներ, նորաձեւութեան
հետուաւ պըրողներ, և փայտակերտ
մարդարձաններ, որոցմէ շատ կը տես-
նենք Երէնի և Վէտօքէտին հանդեր.

Ճատանց առջեւ: Մանաւանդ անոնց
մէջ աղեկ մը կար, սեւ մօրուսով և
կարմրուկ այտերով, որ բաղդին մէկ
դառն հեգնութեամբ իր մականունը իր
դլիին վրայ կը կրէր:

Վարժարանի Տնորէնն, որ սովորա-
կանէն աւելի զուարթ էր այն օր, և
որ գեռ նոր ճաշակած կ'երեւէր կա-
պելապանի մը անմահ ու անիմանալի
շոգին, կարդալու սկսաւ չորս ու ցա-
մաք տեղեկագիր մը, որով կը պար-
զէր վարժարանաց ուսումնական, բա-
րոյական, նիւթական և շատ մը ական
միճակին և քարեր նետել կուղեր կ'գ-
րոնական վարժարանի վերածելու գա-
ղափարին, որ թէեւ համաձայն է Աղ-
գին շահուն, այլ չէր համաձայն իր
հաշւոյն:

Ռագա սկսաւ ճառերու և արտասա-
նութեանց Հինգ մը, ընդմիջմամբ եր-
գերու և պարզեւարաշխութեանց:
ովկիան ըսինք և իրաւունք ունինք.
քանի ճառ կը կարծես որ կարդան
երկուու ուսանողք. հինգ, տա՞սը,
տասնեւհինգ . . . ելիր, ելիր. քսա՞ն,
քսան և հինգ, երեսուն . . . ելիր,
ելիր, երեսուն և հինգ, քառասուն,
քառասուն և հինգ . . . կուզես նէ
կեցիր. բայց ի՞նչ պիտի ընես, մեր
ճակատագիրը սեւ էր այդ օր և հա-
մակերպելու էինք. ասիկայ նորու-
թեանց մէջ նորութիւն մը, գիւտերու
մէջ գիւտ մըն էր, որ Գալիֆուոնիոյ
ոսկերեր հանքերէն ալ աւելի կարդէր,
ըստ վարժարանաց մեծապատիւ Տը-
նօրէնին:

Բայց այս վալրկեաններու մէջ գիւ-
տելու արժանի էին Մասնախմբին ան-
գամոց մէկ քանիներն, որոնք կա-
տուին բացակայութեանէն օգուտ քա-
ղելով տունը տակն ի վրայ ընող մըկ-
նիկներու պէս, սիրային սլաքներ ալ
կը նետէին յաջ և յահեակ, մերթ ժը-
պիտ մը ցոյց տալով ժպտողի մը, մերթ
հուր աշեր ուղեկով համեստիկ նայ-
ուած քներու և մերթ ալ շորս կողմ-
նայելով, ձեռք շի տալու համար իրենց
օձիքը:

Երբ վերջացաւ մրձանակաց բաշ-
խումն և ճառերու ընթերցումն, որոց
հայերէններն ընտիր գրուածներ էին
չնորհիւ Մեծ. Ե. Տէվէթեան էֆ.ի ան-
խոնց չանից, Բեդրսպուրկի կայսերա-
կան Օբերային երգիչներէն Պ. Ներսէս

Շահլամեանց բեմ ելաւ երգելու համար:

Երկայն հասակաւ, խրոխտ ու սէգ հակատով, առնական կեցուածքով և խարտեաշ մօրուսով երիտասարդ մընէ այն, առոյգ և կորովի. իր այտերուն սպիտակութեան մէջ կը մարէր անոյշ մելամաղձութիւն մը, որ բանաստեղծութեան սիրահարներու բաժինն է միշտ և իր հրացայտ աչերուն մէջ ալ քաղցրիկ հիացում մը կար, որ անհունութեան կը նայէր:

Ուշադրութիւնք յարուեցան և ամեն աչեր հօն ուղղեցան միապիշ, վայրկեան մ'առաջ հագեցնելու համար իրենց հետաքրքրութիւնը: Վերջապէս բերանը բացաւ ու դաշնակին ընկերակցութեամբ երգել սկսաւ Ծիծեռնակն, այս անոյշ և աղդեցիկ երգըն, որ ամեն հայ մանկանց շրմունքին զարդն է. իր նէնուի ձայնն, որ հոգեցունց թրմռումներու և մելամաղձիկ աւաճներու համադրութեամբ էր հիսուած, մերթ քնարի մը հանգոյն անհունութեանց մէջ կը ծածանէր և մերթ մեր հեշտօրօր ականջներու տակ կը նուազէր:

Չեմ կրնար ճշդիւ թուղթին աւանդել այն օրուան հիշտ տպաւորութիւններն, զորս ունեցանք իր ձամին իլուր: Ծափահարեցինք զայն, ջերմապէս ծափահարեցինք և ծափահարելու ալ ի՞նչ կար նոյն օրուան հանդիսին մէջ:

Հուսկ ուրեմն, երիտասարդ մ'ելաւ միջավայրին մէջ կեցաւ. իր կեցուածքը կը յիշեցնէր Ալետալուն որ երազներու մէջ կը թափուի այժմ: Հոգաբարձութեան անդամներէն է եղեր այն, բայց ատանկ շնորք չուներ երբէք իր վրայ. կլորիկ թօմօշիկ պատանի մըն էր, հազիւ քսան և եօթտարեկան, որ պարահանդիսի լամեր էր հադած. նեղնորածեւ տափատ մը, բաց նորածեւ հէլք մը և կարճ նորածեւ անժառական մը. գլուխն ալ դրած էր կարճնիկ ֆէս մը, ուրկէ մոտ մը կարճ էր վրայի ֆէտիկէլը, այս ամենքը դիւթական հրապոյր մը կը տարածէին նորա վրայ և ցոյց կուտային թէ փափկաճաշակ և ձեւադիտակ մէկն էր այն: Բայց ի՞նչ կըսէր, ոչ ոք հասկըցաւ, վասն զի ոչ ոք լսեց իր ձայնը. իր խօսքերն, անամէջ գաղափար-

ներու և անհամ ու անլի իմաստներու շարք մըն էին. միայն ըսաւ թէ ինք, իբր առէն տեղեակ վարժարանաց կրթական և ներքին վիճակին, չնորհակալութիւն կը յայտնէ առ պաշտօնեայս և մասնաւորապէս առ ցնօրէն վարժարանաց, որ այսուն անխոնն տքնութեամբ կաշխատի ի փառս Հայ աղգին: Այս խօսքին վրայ, հեգնուտ ծիծաղներնը կարուեցան այն շրմանց վրայ, որք ծամարտութիւնը գիտէին, որք մոտէն կը ճանչնային ատենաբանն ալ (*) իր խօսից ենթակայն ալ. Մարդ մը, որ իր կեանքը փոշիներու մէջ կ'անցնէ և ոյր հորիզոնը վաճառատան մը մուխտ խորչն է միայն, ի՞նչպէս կրնայ առէն տեղեակ ըլլալ վարժարանի մըներքին կացութեան, մանաւանդ որ հազիւ երեսուն օրէ ի վերտեսած է այդպիսի պաշտօն մը և իր արհեստին բերմամբ ժամանակ ալ չունի վարժարանը յայցելնելու:

Այս ալ հատաւ և երեք ու կէս ժամերէ ի վեր մենք ալ հատած լըմնցած էինք արդէն: Ս. Պատրիարք Հայրը, նշամարելով անշուշտ ամենուն յօրանջներն ու ձանձրութիւն նշաններն, փակեց այս կրթական հանդէսն ընտիր և աղդու բանախօսութիւն մ'ընելով: 23 Մայիս 89 ՀՐԱՅՐ ԵԽՆԻ-ԳԱՓՈՒ

ՏԻՇ ԹԱ.ՊԻՊԻ

ԺՈՂԵՖ ՆԱԼԲԱՍ

Ցիշ թապիկէրինին էն մահիրի օլուպ, քէնտիսինէ միւրածտամ իտէն լէրի աղ վագրիթ զարֆընտա շիֆարէզիր իթմէքը պիհագ զըն խօշուտ իթմիշ օլան ֆօզէֆ նալբաս էֆ Սիրքէ. ճիտէ թրամկայ ճատտէսինտէ Տույունու Աւումիէ իտարէսի գարշընընտա Ցնումէրօլը մահալը մախսուստ պուլունմագտա տրը:

Թապիոլը մումսիէլէ զայէթ մահիրանէ պիր սուրէթտէ իմալ էլլէտիկի տիշէրի էհիքէն ֆիյամլա ֆիրութիլ իթտիկի կիզիկի, միւշմէրիէրինի քէմալը հիւրմէթ վէնէզոքթիթլէ գապուլ վէտիշնի խասթալը լարընը հիւսուիթէ. տավի իտէրէք, ճիւմիէնին մէմնունի. յէթինի գաղանմագտա տըր

Վ Ի Ճ Ա Կ

Կէչէն ճիւմա իրթէսի կիւնքի նիւսիէմիզտէ, էվլիլիսի չարչէմպիհ ախշամը հաղըրլանտն պիր Վիճակը հիքեայէ իլէ, տէվրիսի բէնչչէմպիհ կիւնիւ չէքիլիպ չէքիլմէտիկինէ տաերի մուխպիրիմիզտեն պիր մալիւմաթ վասըլ օլմուշ օլմատըզը վէ մալիւմաթ ալտրզըմըզտա նէշը իտէճէկիմիզի պի պիլտիրմիչ իտիք:

Պու տէֆա ամիտէքի նագլիեաթը հավի պիր վարագա թարաֆըմրզա իրսալ օլմուշ օլտուղունտան, այնէն տէրճ իտէրիզ:

«Վիճակըն բէնչչէնպիհ կիւնիւ սապահնը, նագլ իթմիշ օլտուղունուզ վիճակ գոեան գատըն պէտօեիւք պիր թէլաշ իշինտէ օլտուղու հալտէ, հէման վիճակ գ օնուլան լէհէնի մուայեէնէ վէ հէյեէթը ասլիեէսի իլէ տուրտուղունու կէօրտիւքտէ, զիւեատիսիլէ մէմնունիէթ կէօսմէրտի, լէհէնին իւզէրինի գարաթմը օլտուղու այնանըն իւզէրինէտէ պիր ավուն ուն տէօբմիւշ օլտուղու կէօրիւլտիւքի, սիզ իշար իթմէմիշ իտինիզ գարաթմիզ գարաթմիզ ավեատէ սէպին ալամէթի կէօսմէրէթէք:

—Բա վույ, հիմայ կը խենդենամ, վիճակնիս բէք մախպուլ էղեր է նայէ մենէ աղէկները վրայէն անցեր են, տէտի:

Գատընըն պու սէօզիւնէ մէրագիտիպալէթլընտա ունա պագտըզըմտա, վագասըլը աեագ եղլէրի կէօրտիւմ իսէտէ, քէտի աեագը իզլէրի օլտուղունա հիշ շիւպհէ եօգիտի:

Հէր նէ հալ իսէ, պիրազ սօնրա պիրի պիր արտը սըրա տավէթլիէր կէլիպ, գարը, գըզ, էրքէք, չօլուգ չօնուգ եիկիրմի քիշիտէն իպարէթ պիր ճէմիյեէթ թօրլանտը:

—Բա աշկդ չը խազայ, ատ վիճակն ալ ուր տեղէն միտքերնիդ ինկաւ տէ հաստատեցիք:

—Իշտէ, մերինին պանք շատ, կիւտես քի հոգ խասավէթ չունի. էրնէկ սրտին:

—Աման կնիկ, ի՞նչ է եղեր, ուրերնիս օր ընելլը նայինք, սօնու սօնու

չէ քի պիտի մեռնինք :

—Քա հիմայ մեռնելու լախըրտըն ալ ի՞նչ եր քի օրթան ձգեցիք . պօշ լախըրտըները մէկդի դրէք տէ , վիճա՞կ պիտի հանէք ինչ պիտի ընէք նէ ան նայինք :

—Հայտէ , սա լէհէնը օրթան պէրէք :

—Ան չէ ամա , վիճակը ո՞վ պիտի հանէ ,

—Ես կը հանեմ :

—Վո՞յ , խօճաման աղջիկ է . անիկայ խելքը ըլ համնող պզտիկ չօճուխի հանել կուտան :

—Աֆ կընես ամա , տուտու , տուն ալ աղջիկս ատ խըտարի մի՛ մեծցըներ ա՛ , կայնէ նայինք , տահա էրէկուան չօճուխն է :

—Վրան պարի , մեղա՛ , կիտես քի տահա պերանը սիւտ կը հոտի կոր :

—Քա պօշ լախըրտըները ձգեցէք , իշտէ տալօն չօճուխը նստեցուցի , ութը տարու չօճուխ , անոր ալ ըսելիք չունի՞ք ա :

—Զէ , չէ աղէկ է . . . հայտէ , վիճակը ո՞վ պիտի ըսէ , պաշայեցէք նայինք :

—Գարէնֆիլսին սարգարսըն
Աչըլմայա գորդարսըն
Բէնպէ զար եարին կէլսէ
Էօլիւ խէն գալգարսըն
Հանէ աղջիկս հանէ

—Ճամնը կէօղլիւկ մը :

—Քա վո՞յ , մամիկինն է :

—Եռէհա՛ , խօճաման կընիկ , էյ հիմայ ատ վիճակը էղա՞ւ :

—Ինչո՞ւ պիտի ըլլայ , հիմայ ոզորմած հոգին տիրիլմիշ ըլլայ տէ մէզարէն էլլայ կայ նէ ինք ալ տիրիլմիշ ըլլա՞ր մի եա :

—Պաշխա ըսէք , պաշխա ըսէք :

—Կէօքտէն գանտիլ ինիեօր
Սէնին չարդըն տէօնիեօր
Գիր ազանդը տահա սապը էթ
Գըսմէթին կէլիկ գօնուեօր
Հանէ աղջիկս հանէ :

—Քարը ինկած մատնի մը :

—Ո՞վ է , ո՞վ է ,

—Հալա տուտու , տաքէրո՞ջ աղջկանն է :

—Վույ էրկու աշկըս քեօրնայ , ինտոր ալ թըբիլսըն էլաւ . իրեք հեղ է

քի մատնի խօսք կապ կը պերէն , իրեք հեղուն ալ սօնը չեկաւ ետ էղաւ :

—Ինչ թալէհսիկ աղջիկ է էղեր . ամա գուք ալ վախթին տավրանմիշ չեղաք տէ , նափիլէ տեղը աղջիկը մընաց :

—Քա էյ մեղա՛ , իրաւցնէ քառսուն տարու չէ եա , նայինք հիմայ մէկ աղէկ ուղող մը կայ , անոր էտեւէն էն :

—Էյ իշտէ ատոր համար ըլլալու է , չես նայիր վիճակը «գլամէթին կէլիկ գօնուեօր» ըսաւ , մութլախ պիտի ըլլայ :

—Էյ ճանըմ , վիճակը ըսէք :

—Ա պէնիմնառ չիշէեիմ
Նասըլ սէնտէն կէշէեիմ
Պանատա եազբդ տէեին մի
Աշգ ու սէվտան չէքէեիմ
Հանէ աղջիկս հանէ :

—Խոչախի կօճակ մը :

—Քա կէնճ մարդունդ է :

—Վուշ , չի վախնաս , ըրախիին աշգ ու սէվտան վազ անցած ունի՞քի :

—Տէ տէ , վրան մի կոցեր , իշթէ քեզի համար թախ հիմայ աշգ ու սէվաա կը քաշէ կոր էղեր :

—Չես ըսեր մի եա , անոր համար քի էրկու գիշերը մէյմը օլսուն քիւֆիւր կիւնահով հացս հարամ չընէ նէ չըլլար . տահա կուշտիս ցաւը անցած չէ , անոր մարիֆէթը չէ մի եա . անանկ մարդուն աշգ ու սէվտան ալ կետինն անցնի ինք ալ :

—Կէնէ կէշ մըսեր մարդուդ , ինչ տար ըլլայ նէ հացը կուտես կոր :

—Մտիկ ըրէք , վիճակ կըսուի կոր :

—Գահուէ բիշտիի եէրտէ
Քէօրիւք թաշտըդը եէրտէ
Կիւզէլ չիրքին արանմազ
Կէօնիւլ սէվտիեի եէրտէ
Հանէ աղջիկս հանէ :

—Ասմա քիլիտի մը :

—Քա՛ , իշտէ աս աղէկ , ամուճաեիդ աղջկանն համար է :

—Վրան պարի , չիրքին է չիրքինէ տէյի միուր կուտեն նէ , պարէ չիրքին ըլլայ , պօյը պօսը սիրեմ , ֆիտան կըլմանի :

—Քա ինչո՞ւ սիրտ կը հատցունես , չիրքին է նէ լիրքին է , առնողը հաւ-

նեցաւ առաւ , որի՞ ինչ . սա վրան ինենդ կըլլայ կոր ա՛ , տուն ան նայէ :

—Պաշխա պաշխա :

—Աւզունսըն օըրըգ կիպի
Էքչիսին քօրուդ կիպի
Նէ՞ սէրսէֆիլ կէղէրսին
Շաշըրմըշ թավուդ կիպի
Հանէ աղջիկս հանէ :

—Ճէղլիւի կօթ մը :

—Տաեկիկդ տղունն է :

—Էյ ինչ ըսեն նէ ըսեն , աս վիճակը բէք թէքին պան չէ . թախ խափային զարկաւ :

—Քա աղջիկ սրբան ինկաւ տէ կը հարցնեմ . անոր կո՞րծը ինտոր էղաւ :

—Ինտոր պիտի ըլլայ , իշտէ վիճակը ըսաւ ա՛ . սըրըսի պէս պօյը տընկեր սէփիլ կը պտըտի :

—Քա հա հա հարսնիք պիտի ընէ . ին նէ , կէնէ՞ չեղաւ :

—Քա մըզըրաք չուվալա սըզա՞ր , սարափ է տէյի իրեք հարիւր ոսկի թըրախումա պիտի առնէին ամա , պօշ կէզէնին պաշ գալիքասը ըլլալը աղջիկան թարափէն հասկըցան տէ ետ կեցան :

—Սուս էղեք տէ վիճակ մ՞ալ ես ըսեմ :

—Տէնիզին տիպի տուրկուն
Իւշ կիւզէլ պանա վուրկուն
Իքիսի եէրինտէ տուրսուն
Պիրի պօենումա ույկուն :

Գալ անդամ

ԾՐԱՐԵՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Յ շաբախտ յառաջ , Թօբհանէլի օղլուէն ինատինէ երթալու ճամբուն վըրայ ծրար մը նամակ գտնուած և տիրոջը յանձնելու պայմանաւ մեր գրասենեակը թողուած լինելը ծանուցանելով հանդերձ , խնդրեց նք նաեւ որ այդ նամակսերը որու որ կը վերաբերի , մինչեւ տասն և հինգ օր բարեհաճի առնել մեր գրասենեկէն , որպէս զի մէկիկ մէկիկ հրատարակելու փորձանքին չենթարկուիմք :

Բայց մինչեւ այսօր հարցնող և տէրը ըլլու մը չդժուուելուն , մենք ալ կըսկինք հրատարակել :

Սէվկիւլիւ պիպիմ
Պագտըրդ ճազ սէն հազիմ հազիմ ,
պիլմէմ նէ՞ օլաճադ պէնիմ հալիմ . օլ

սէնին թաթլը պադը մարզնա նաեիլ
օլտուզում կիւնիւն ախամըսը . սա-
պահարա գատար զըպ զըպ ուշրաելը,
ույգու տէնիլէն չէյ կէօղիւմէ կիրմէ-
եր . ա՛խ , պիափիմ . հազըը հավալար
սէրին , բիրէ թահթապիթիլէր չօղալ-
մատան մըըլ մըըլ ուեւումտգ վագթի
իքէն . սէնին հաեալըն , բիրէ թահ-
թապիթիլէրտէն զիեատէ պէնի թաճիզ
վէ ույգումու հարամ իթմէքտէ տիր-
պու սէֆէրքի րիեանգօտատա իւմի-
տիմիլ պօչա չըդտը . ա՛խ , նէ օլու-
րուտու չէօլէ կիւզէլ պիր չէյ պիզէ
վուրաեցալըտա , սէնի իլէ նեֆէսիմիզի
զու Փարիզոտէ ալաելըտըգ . նէ եաբա-
ելը պիլմէմ , իլէ պու արա Փարիզ
եքսրօղիսիօնունա կիթմէնի էօլէ ար-
զուլէնեօրում քի . էկէր սէն օլմազան
եաեան կիթմէնի կէօղիւմէ ալաճագ-
տըմ , հիշ տէնիլ իսէ պօրճաւարըմն
էլինտէն գուրիթուլուր ըլուր . էկէր նէ
գատար պօթինլէրիմին ալթը տէլին-
միշ իսէ տէ , էլպէթտէ աղապանտան
ալրպ պանա իքի չէլրէք կէօնտէրիր
իտին ամա , եօգ , եօգ . սէնի պրագըպ
կիթմէք խայինիկինսի իթմէմ . էլպէթ-
տէ սէնտէ պօթինլէրիմին տէլիք օլ-
տուզունու տուեւուպտա . պանա իքի
չէլրէք կէօնտէրմէզզիք կիսի պիր
խաենիք էթմէզզին : Ա. Հ. հալիմի
պիլիրսին . պագ սանա մէզաթ մալը
գըրդ բարաեա պիր չիշէ էքսմիք պի-
լէ հէտիեէ իտէմէնեօրում . իւմիւտիւմ
թէրքօզ սուեւու գունբանեասընա եա
զընըզա կիրմէք իտի , օտա սուեա
տիւշտիւ , կէնէ գալտըմ աշդպատա .
ա՛խ , նօնօմ , էկէր պիլսէն քի էփին
պունազընտա գաբանմը գալմըչ աղ-
շարը չըդմաեա ութանըեօրում վէ
տուեիմա սէնի տիւշիւնիւպ հէնուիւր
հէօնկիւր տղլաեօրըգ , աճապա սիրուէ
աղլամնա զմրօքնըգ . շիմափ սանա շու-
նուտու րէնա իտէրիմ քի էկէր տունի-
տան աղըապատան պիլտիք պիր թէր-
զինիզ վարսա պանա բրէզոնմէէ էժ-
ունիդ նէ՝ օլուր , հիշ տէնիլ իսէ տը-
շարը չըդապիլիպտէ , արատա պիր օլ-
ուն սիզի կէօրիւպ արզումու ալրըմ
Հարիպ կէօյնիւմ աշդըն իլէ

Թութուշտու ըըրըլ ըըրըլ
Զի փայտէ քի ճէպիէրիմ պօ
կէզէրիմ թըրըլ թըրըլ
Ա. Հ. իթտիքնէզ պէն սէփունիէ
Ուեւուրուն խըրըլ խըրըլ
Պիր կիւն սէնի կէօրմէնինմէ
Աղէրիմ զըրըլ զըրըլ
Պէնաէնի
Սատրդ աշդպէնըզ



—Ծո տղայ , աշքդ լոյս :
—Ի՞նչ կայ քի :
—Ի՞նչ պիտի ըլլայ , հէմէն սա ֆօ-
թօկրաֆըգ . հանել տուր տէ , էրթանք
սա աղջիկը առնենք :

—Ո՞ր աղջիկը քա , խե՞նդ էս ի՞նչ
էս :

—Խե՞նդ ի՞նչու պիտի ըլլամ , վրաս
պարի . անցած գիշեր եէնկէեիդ տու-
նի կացի նէ , աղա տաեիդ ղազէթան
կը կարդար կոր տէ լսաւ քի . 8000 սո-
կի թրախումայով աղջիկ մը իլան ըրեր
է :

—Է , սա աղջկան ով ըլլալը հաս-
կըցա՞ր :

—Հապա , զազէթային մէջ իլան
ըրեր է քի , ով քի նամակ գրէ նէ
Ա. Յ. Լ. Բ. Յ. Գ. ատրէսով գրուն
ըսեր է . հէմ ֆօթօկրաֆտ ալ հա-
նես նամակին հետ զրկես պիտի եղեր .
—Աղէկ ամա ատ 80000 սոկիին կէս
սոկին օլուն բէշին զրկելու էր քի
ֆօթօկրաֆտ հանել տայի :

—Ծո կէնէ ճէպըպ փարա շոնիս ,
վայ պանա ,

—Է ի՞նչ կըլլայ . Ա. Յ. Լ. Բ. Յ. Օ.
Գ էնց աղջիկը տէրսիզ մնացեր է տէ ,
ես փարասըզ մնացեր էմ նէ ամօթ է :

* * *

Միւսիւ , քէօնէ նէ՝ վագըթ չըգա-
ճագունըզ :

—Էֆէնտիմ տօղրուսու էօլէ պիր
ֆիքիր վար ամա , հավալար սէրին կի-
տիյօր տտ , պիր իքի կիւն տահա ի-
լիշէլիմ տէտիք :

—Ֆիլ վագըթ բէք կիւզէլ հավա-
լար էտինօրսատա պու սէրինինի չօգ-
լուգ էմիլիէթ օլմազ :

—Իշտէ սէնին տէտիկին էմիեէթ-
սիզիքտէն տիր քի կիտէմէնեօրում ա :

—Նէտէն :

—Էֆէնտիմ պաքալա գասապա
սաքաեա պիրագ հիսապ եըլլըմը ,
պունլարա տէտիմ քի պէն պիր գաչ
ալ իչին քէօլէ չըդաճազըմ չարչեա
կէլին բարանըզ վէրիրիմ . պէնիմ հա-
վաեա էմիեէթ իթմէտիզիմ կիսի ,
օնլարտա պիր թիւրլիւ պանա էմնի-
նէթ էտիս պրագմայօրլար քի չըդա-
ելը

—Աղնատըմ սէնտէ պէնիմ կիպի
պու եազ պուրտա կէշիրէճէքսին :

ՀԵՔ ՈՒՍԱՆՈՂԸ

(Կրական նորավէպ)

(Նոբորդ նէ-էն)

Կրնակի վրայ պառկեցուցին զայն ,
քակեցին շապկին կոճակներն ու Տօք-
դէուն ականջ գրաւ անոր որտին ,
կուրծքին , կողերուն և զանազան մա-
սերուն վրայ ու մոփկ ըրու ներքին
փոթորիկները , ստէալ «շունչ ա՛ռ ,
աղա՛ս , հազա՛ , տղա՛ս » ըսելսպ . ա-
սոնցմէ զատ , ժամացոյցի ձեռին զըն-
նեց նաեւ անոր բազկերակն , երեսին
աստիճանական փոփսխութիւններն որք
ահ ու սարսափի կուտային նմա . մէկ
քանի վայրկեաններ սահեցան դառն
լուութեան մը մէջտեղ . երբոր լմցաւ
կրծոց քննութիւնը , Տօքդէօռը հայ-
եացը մը ձգեց քովիններուն վրայ .
հայեացք՝ որ «Երեսի վրայ գարձուցէք»
կը նշանակէր . բարի բժիշկն ականջ
գրաւ , կրնակին ոսկորները մէկ առ
մէկ կոխեց , գիտական փորձեր ըրաւ ,
յաճախ հարցնելով թէ «Հոս կը ցա-
ւի» որուն «Այս՝ կամ ո՛չ» կը պատաս-
խանէր Հայկ :

Յաւարտ մարմնագննութեան ,
Տօքդէօռը նստաւ աթոռակի մը վր-
այ , խոկուն ու մտածկոտ , և զոգ-
ցես ի բաց վանելու համար այն ալ-
լայլումներն , որոնք յալտ յանդիման կը
գծուէին իր գէմքիս վրայ , գլանիկ
մը վառեց . բան մը որ բժշկաց մը-
տատանջութիւնը կը մատնէ իսկապէս ,
ապա , մատիտ ու թուզթ հանելով ,
սկսաւ գրել դեղագիրը . բայց միշտ
մտածկուտ , միշտ անժպիտ

Ով գիտէ իսչէր նշմարած էր այդ
ճարտարաբուեստ բժիշկն , որ սրտին
մէն մի բախման և չիզերու մէն մի
ցնցման պատճառները գիտէր , արդ-
եօք ինչեր տեսած էր անոր մաշած
կուրծքին տակ , որ անդունդ մըն էր
անցատակ , —անհուն վիհ մը ցաւոց ու
տառապանաց . Ա. Յ. Ո. , ով գիտէ ի՞նչ
նշաններ գիտեր էր այդ խարտեաշ
ալ տժգոյն պատանւոյն ներան , որ
այնքան յուզուեր էր նա , իբրեւ մարդ
և ոչ իբրեւ բժիշկ , զի բժիշկները դա-
հիճներ են յաճախ

Ցովսէփ , որ բնաւ աշերէն վրիպե-
ցացած չէր Տօքդէօռին ամեն շաբ-
ժութիւնն , տեսած , շատ լաւ տեսած

էր այն ամեն վոփոխութիւններն , ո
բոց ենթակայ կը լինէր նա և հետ
տղան կը զգար թէ ծանր էր այն հի-
ւանդութիւնը , որով վարակուած էր
Հայկ , իր սիրակցորդ ընկերը :

Գնաց կծկեցու խցիկին մթագին
անկիւններէն միոյն մէջ , անտես ընե-
լու համար այն մէկ քանի հատիկ ար-
ցունքներն , որք աշաց խորքին մէջ
փալփլացին :

— Խե՞զ Հայկ , կ'ըսէր իւրովի , չի
բաւեց այնքան հոգեկան չառարանք-
ներն և ահա մարմնական ցաւեր ալ
ադոնց վրայ կը բարդուին , իբրև լը-
րումն աղէտից :

Տօքդէուն , որ տասն վայրկեանէ
աւելի վատնած էր մէկ դեղագիրը
խմբագրելու համար , վերջապէս լայն
շունչ մ'առնլով աւարտեց զայն և ինչ
ինչ առողջապահական ու զգուշական
յանձնարարութիւններ ընելէ զկնի ,
մեկնեցաւ տիսուր տպաւորութեամբ
համակուած :

Այս՝ շատ տիսուր էր Տօքդէուն
և կը մտածէր թէ ուրկէ կրցած էր
ստանալ նա այդ սեւ ախտն , ոյք դար-
մանը գերեզմանն է միայն . գիտերնա
թէ պիտի մեռնէր Հայկ , բայց իբր
ձեւակերպութիւն դրած էր դեղագի-
րը . միակ յոյս մ'ունէր , այն ալ Ազ-
գային Հիւանդանոց փոխադրել էր
զայն . հոն , կը մտածէր , օդոց աղ-
դեցութեամբ կամ աւելի ճիշդը խօ-
սելով տեսակ մը օդափոխութեամբ
կրնար թերեւս երկարել իր կենաց
շըլանը , կրնար թերեւս քիչ մ'ա-
ւելի հանգիստ գտնել այն չարաշուք
ախտէն , որ աւազ , այնքան աւերիչ
աղդեցութիւն մ'ի գործ դրած էր ա-
նոր թոքին վրայ :

Սակայն չաճապարեց յայտնել իր
այս կարծիքն , երբ մարմնազնու-
թենէ յետոյ , ներկայանալով Հայկի
պաշտպանին պատմեց իրողութիւնը .
միայն շատացաւ ըսելով թէ բաւական
յառաջացած բուժք մը տեսած էր ա-
նոր վրայ , և թէ այդ ախտը կամաց
կամաց քայլ առնլով երեւան ելած էր
յանկարծ հագով , քրտինքով միա-
տեղ .

Հայկի պաշտպանը մեծաւ զարմաց-
մամբ և արգահատական ուշադրու-
թեամբ մտիկ ըրած էր բժշկին խօսքերն
որք ճշմարտութիւններ էին . բայց ի՞նչ
կրնար ընել նա , կրնա՞ր մարտնչիլ մահ-

ուան դէմ , կրնա՞ր ի բաց վանել այդ
անողոք ախտն , որ մաշիչ որդի մը
հանգոյն , եկած փակած էր անոր
ճիշդ լժոքին վրայ :

Մեկնած էր Տօքդէուն և քասորդ-
ճամ մըն ալ անցած , երբ դեղագոր-
ծին աշկերտը ներս մտնելով Հայկի
սենեակէն , Յովսէփի կարկառեց դե-
ղերն , արսնք ուրիշ բան չէին եթէ ոչ
տուփ մը դեղահատ , շիշ մը դեղին
ջուր և շիշ մըն ալ Մալակայի գինի ,
այս վերջինն ուժ տալու համար Հայկի
վատուժ մարմնոյն . պատրանք . . . :

Այս միջոցիս Հայկ , յանկարծական
տենդէ մը բանուած ըլլալով , թմբրեր
մացեր էր իր անկողնոյն վրայ , հե-
տեւաբար չէր իմացած դեղերու ժա-
մանումն . ուստի Յովսէփի , որ Հայկի
վրայ կը հսկէր , մօտեցաւ անկողնոյն
ու անոյշ ձայնով մը .

— Հայկ , Հայկ , եկիր , դեղերդ ե-
կան ըստաւ :

Բացաւ Հայկ իր խոշոր աշերն , որք
տենդին ազդեցութենէն աւելի եւս
խոշոցած էին . ելաւ նստաւ անկող-
նոյն մէջ և առնլով դեղերն , որք իր
ցաւոց չափ դառն էին , կոկորդէն վար
սահեցուց . ապա ի նշան խորին երախ-
տագիտութեան գլուխը մեղմով շար-
ժելէ զկնի , վերստին գլորեցաւ իր
բարձին վրայ , մեռելի մը հանդոյն
տմոյն և դալկահար :

Յովսէփ ալ , քանի մը վայրկեան
եւս հսկելէ յետոյ իր հոգեկից բարե-
կամին անարին վերեւ , ոտից ծայրե-
րուն վրայ կոխոտելով խցիկէն դուրս
սողոսկեցաւ , ստուերի մը պէս լուիկ
ու վեհերոտ և անմիջապէս փութաց
իմաց տալ իրողութիւնն Հայկի դըպ-
րոցական ընկերներուն , որոնք անհամ-
բեր կը սպասէին դեռ եկեղեցւոյն բա-
կին մէջ :

Երբոր այս վերջինք տեսան Յովսէ-
փին , որ մոլոր քայլերով դէպ իրենց
կողմը կը յառաջանար , իսկոյն շրջա-
պատեցին զայն ու հազար ու մէկ հար-
ցումներով ողողեցին : Պատմեց Յով-
սէփի , համառօտիւ պատմեց ամեն ան-
ցած դարձածները . շի մոռցաւ յիշա-
տակել նաեւ իր յուզումներն , իր ար-
ցունքներն , Հայկի մեռելատիպ կեր-
պարանն , բժշկին այլայլումներն , որոց
և սոքա կ'ունկնդրէին ուշագիր . բայց
դողդոջեցին երբ յարեց նա խուպոտ

ձայնով մը , որուն մէջ դառն շեշտ մը
կար :

— Մե՞զք . . . պիտի մեռնի Հայկ .
Տօքդէուը ընաւ յոյս մը չի յայտնեց
անոր նկատմամբ . յուղեալ էր , խիստ
յուզեալ , թէ մարմնաւզնութեան և թէ
դեղագրին խմբագրութեան միջոցին .
շատ զարմանալի է եղբա՛րք , դեռ
հինգ վեց օր առաջ տեսայ զինքն իր
խուցին մէջ՝ սեղանին առջեւ , որ իր
դպրոցական գասերով կը զբաղէր ողջ
առողջ . բայց այսօր , այս օր իբեն
համար ամեն բան կը վերջանայ և ինք
դերեզմանին եզրը կը դտնուի . ա՛հ ,
սեւ ճակատագիր , որ մէկ անակնկալ
հարուածով կը տապալես կը խամրես
կեանքեր ու ծաղիկներ , առանց նա-
յելու խրճիթին կամ ապարանին :

Երբոր վերջացուց Յովսէփի իր պատ-
մութիւնը , շի կրցաւ արգիլել արցուն-
քի մէկ քանի կաթիլներ , որք վար
սահեցան մեղմաբար . բայց այս ար-
ցունքները այնքան խոր տպաւորու-
թիւն ըրին միւսներուն վրայ , որոցմէ
ամենէն անտարբերն խոկ իր կարգին
չկրցաւ արցունք չի թափել , ի լուր
Յովսէփի տիսուր պատմութեան տիսուր
վերջաբանին . . . :

(Շարունակելի)
Գէնը Կ. Սիմբէցեան

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Յ Յ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

Դում գաբու , Եէնի գաբու , Սամա- թիա , Հանդիսավայր	
Թիւ	Բատ Տճ. Փամ Բոպէ
6	14
12	1
16	2
18	3
20	3 30
22	4

Դարձ .— Երեկոյ Եէտի գուլէէն
ժամը 4,57էն մինչև 12,4 տասն և
երեք շուրջեկառք կայ Եէտի գուլէէն
Սիրքէնի երթալու համար :

Աէդ .— Վէրոյիշեալ 6 կառախումբե .
ըէն զատ 16 կառախումբ եւս կան , որք
Սիրքէնի կը մեկնին և մինչեւ Եէ-
տի-գուլէ կերթան , իսկ Հադիսավայր
ոչ :

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՅՈՒՅՆ — Մ. ՄԱՍՊՈՒՐԵԱՆ

Հանդիսիս տպարանէն ի լոյս ընծայուեցաւ Մեծ. Մ. Մամուրեան է Քէնտիփ սոյն նոր և բազմապատկեր ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ, մաքուր տպագրութեամբ և գեղեցիկ կտղմով։

Փոքր մանուկները, որք քերականը աւարտելէ յետոյ չունէին իրենց կարողութեան յարմար ընթերցանութեան գերք մը, ահաւասիկ սոյն պատկերագրդ Ընթերցարանն պիտի ունենան այսուհետեւ, որու մէջ պիտի գտնեն փոքրիկ պատմութիւններ, ոտանաւորներ, հանելուկներ, պիտանի գիտելիքներ, որք գեղեցիկ հերպով գասակարգուած են աստիճանաբար։

Կը յանձնարարենք Մեծ. դասատուաց, սոյն Ընթերցարանն, որու պակասը բաւական ժամանակէ ի վեր զգալի եղած էր և զոր կը լեցնէ բազմահմուտ ուսուցիչն։

Կեդրոնատեղին է հանդիսիս տպարանն, և կը գտնուի ամեն Հայոց գրավաճառ առվագին գինն է 2 դրշ. Շատ զնողներու գոհացուցիչ զեղջ ը լինի։

ՖՕԹՈԿՐԱՖ

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ ՊԻԼԱՏԵՐԻԵՐ

ԴՈՒԼԵ ԴԱԲՈՒ ՆՕ. 677

Միւշիրիէրիմիզի մէմուն զըլմագ, էսկիսէն պէրու մէսլէքիմիզ օլուուու ամմէնին մալիւմիւ տիր։ Պու աէֆա էվրօբու նըն էն մէշհուր Փոպրիդալարընտօն մէլու իտէրէք, աթըլիյէմիզի տնաթմը օլուուզումուզտան, միւրաճամաթ իտէճէք միւշիրիէր հէր հալտէ մէմուն գալաճազլա-

տըր։ Գաբալ հավատա պիլէ րէ իմ չէ քիւիր։ Զօնուդլար վէ չօգ տուրմաղա թէնամմիւլիւ օլմայանլար իշին, էն ուն իւսիւլտէ (էնալտաթտոնէ) հանի միւշիրիյի եօրմագ-սրզըն րէսիմէլը չէքիլիր։ Պունտան մաստա Փօթոկրափ իշին էն մէշհուր Փապրիդալարտան հէր ճինս մաքինու վ։ լէվաղիմսիթ վէ էճզու կէմիրիթտիրիլուալ, էնին փիյաթւէ սամբլուր։

Միւրաճամաթ իտէնլէրէ մէճճանէն տէրս վէրիլուպ, մէրագլուտ իշին 180 զրուչագտար մաքինալար Փիրուխտ օլունուր։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒԽՆ

Ն Շ Ա Ն Պ Է Ր Պ Է Ռ Ե Ա Ն

ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅՃ

Մ. Զ Ա Մ Ի

Ա

Յա նշունաւոր ատամնաբոյժն, որ ասկէ առաջ Աւամուրջի Պօլոյ կողմը, Քիւչիւքեան գեղարանին վրայ իւր արհեստը ի գ րծ զնելով մեծ համբաւ և յաջողակութիւն սաաց ծ էր, տեղի ունեցած հրդ էնին պ ատմառաւ իւր գործատունը վոխագրած է այժմ բերա, մեծ փողոց, Պօմարչէի կից թիւ և տունը, ուր ըստ առաջնոյն պատրաստ է իրեն գիմող յաճախորդներն դարմանել ու գոհացնել ըստ ամենանի։

Յաճախորդաց հանգստութեանն համար մասնաւոր սենեակներ կահաւորած և արհեստին վերաբերեալ նոր գործիներ յատկապէս բերել տալով, իւր գործատունը նախկինէն տւելի ճոխ և կատարելագործեալ գիրքի մը վերածած է։

Օ Գ Ր Ո Ւ Ա Ս Ա Ն

ԿԱԼԱՐԱ ԵՒԻՔՍԵՔ ԳԱԼՏԵՐԸՆՏԱ ՎՕՅՎՈՏԱ ԳԱՐՁԵՍԸ ՆՕ. 94



ԹԷԼԵԿՐԱՖ

Պու քերրէ էվրօբատան պիզէ կէլէն սօն մօտա էսպապլար իշին եիւլտէ 40 էքսիեինէ սախըլմագ իւզրէ սըբարըշ օլունմուշ առւր։

Ց Ի Ե Ա Թ Լ Ա Ր

Ի է ա է ն լ օ թ ք օ ո վ ի ւ մ ֆ ա ս օ ն է ֆ ր ա ն ք 50	Բ ա ր գ է ո ի ւ շ ա յ ա ք վ է տ ի ւ զ ր է կ ֆ ր ա ն ք 30
Պ օ ն ժ ո ւ ր ք օ ո վ ի ւ մ ֆ ա ս օ ն է » 46	Բ ա ն թ ա լ օ ն շ ը զ ի ւ լ » 40
Պ օ ն ժ ո ւ ր ք օ ո վ ի ւ մ ր է ն կ լ ի ճ ը զ կ ը լ » 32	Ք օ ն ի ւ մ տ ի ւ զ ր է կ ի ւ մ ի շ ի ւ » 35
Ք օ ն ժ ո ւ ր ք ճ ը զ կ ը լ շ ա յ ա ք » 25	Բ ա ն թ ա լ օ ն չ ի վ ի ւ լ շ ր զ կ ը լ » 15
Ք օ ն ժ ո ւ ր ք շ ա յ ա ք տ ի ւ զ ր է ա մ ի վ ի ւ ր պ վ է ո ի ւ հ ո ր ի ք է » 30	Ե կ է կ օ ր ի ք է » 8